Շրջակա միջավայրի նախարարության

Գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի(UNCCD) ազգային համակարգող):

**2. Գործուղման վայրը ժամկետները**

Ուզբեկստանի հանրապետություն, քաղաք Սամարղանդ, 2023 թվականի նոյեմբերի 11-ից 21-ը:

**3. Հրավիրող կողմը**

«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել Կոնվենցիայի իրականացման վերանայման կոմիտեի քսանմեկերորդ նստաշրջանին (CRIC21), Բյուրոյի հանդիպմանը և կոնվենցիայի շրջանակներում երաշտի հարցերով միջկառավարական աշխատանքային խմբի (IWG on Drought) 4-րդ հանդիպմանը:

**5. Քննարկված թեմաները**

Նոյեմբերի 12-ին, որպես տարածաշրջանային նախագահող՝ վարեցի CRIC21-ի շրջանակներում առաջին հանդիպումը, որին մասնակցում էին Ադրբեջանի, Բոսնիա-Հերցոգովինայի, Վրաստանի, Մոնտենեգրոյի, Չեխիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Ռուսաստանի, Սլովակիայի և Ուկրաինայի ազգային համակարգողները: Բացման խոսքով հանդես եկավ կոնվենցիայի գլխավոր քարտուղար Իբրահիմ Թիայուն: Քննարկվեցին տարածաշրջանում COP-15-ից հետո իրականացված աշխատանքները, տարբեր երկրներ կիսվեցին ազգային զեկույցի իրականացման ընդացքում իրենց հաջողություններով և հանդիպած խոչնդոտներով: Հաշվի առնելով տարածաշրջանային հանդիպումների

կարևորությունը՝ կոնվենցիայի քարտուղարության հետ քննարկվեց հաջորդ հանդիպման անհրաժեշտությունը 2024 թվականի երկրորդ եռամսյակում, ինչը դրական ընդունվեց գլխավոր քարտուղարի կողմից:

Նոյեմբերի 13-ին, տեղի ունեցավ CRIC21-ի պաշտոնական բացման արարողությունը: Բացման խոսքով հանդես եկան CRIC21-ի նախագահող Բիլյանա Կիլիբարդան, կոնվենցիայի գլխավոր քարտուղար Իբրահիմ Թիայուն, Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոևի անունից Ուզբեկստանի Սենատի նախագահ Թանզիլա Նարբաեւան ողջունեց մասնակիցներին, ընդգծելով ամուր գործընկերության անհրաժեշտությունը և կոլեկտիվ գործողությունների կարևորությունը:

Ուզբեկստանի Բնապահպանության և կլիմայի փոփոխության նախարար Ազիզ Աբդուհակիմովը նկարագրեց երկրի արդի մարտահրավերները՝ ավելի քան 400 միլիոն ծառ տնկելու ջանքերը, պահպանվող տարածքների ընդլայնման (4-ից դարձնել 14%-ի), Արալյան ծովի շրջանը վերականգնելու երկրի տեսլականը: Հաջորդեցին տարածաշրջանային համակարգողների բացման ելույթները:

Որպես Կենտրենական և Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային նախագահող, հանդես եկա բացման խոսքով, մատնանշելով Կոնվենցիայի մանդատի ընդլայնման անհրաժեշտությունը բոլոր տարածքների վրա՝ UNCCD հաշվետվության գործընթացի համատեքստում: Առաջարկեցի դիտարկել այն COP 16-ում և ստեղծել աշխատանքային խումբ՝ խնդրին լուծում տալու համար: Առաջարկը աջակցություն ստացավ այլ տրածաշրջանների ներկայացուցիչների կողմից և ամրագրվեց CRIC21-ի հաշվետվության մեջ:

CRIC21-ի մասնակիցները COP-15-ի նախագահ Ալիան Ռիչարդ Դոնվահիի գլխավորությամբ մասնակցեցին CRIC21-ի պուրակի ծառատունկին:

Ուզբեկստանի կառավարության կողմից կազմակերպվեց բարձրաստիճան միջոցառում, որտեղ քննարկվեց ավազի և փոշու փոթորիկների հետևանքով առաջացած վտանգների կանխարգելման և հետևանքների մեղմանն ուղղված աշխատանքներում ջանքերի համատեղման կարևորությունը: Խնդիրը կբարձրաձայնվի COP 16-ին ներկայացվող առաջնահերթություններում, COP-16-ը կանցկացվի Սաուդյան Արաբիայում 2024 թվականի դեկտեմբերին, որտեղ նույնպես տարածված են նման փոթորիկները:

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի» 2018-2030 թվականների ռազմավարական շրջանակի՝ կողմերը CRIC 21 նստաշրջանի ժամանակ քննարկեցին Կոնվենցիայի իրականացման գնահատումը՝ տրամադրելով ռազմավարական նպատակների վերաբերյալ առաջարկություններ:

- Մատնանշվեց Ռիոյի երեք կոնվենցիաների միջև սիներգիզմի կարևորությունը, որը ամրապնդվել է երեք կոնվենցիաների COP-ի նախագահների միջև կնքված հուշագրով: Վերջինիս վերաբերյալ

երկրների պատվիրակները կրկնեցին հողերի դեգրադացիայի, կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության փոխկապակցվածությունը և սիներգիայի ավելացման անհրաժեշտությունը: Հուշագրով ամրագրված գործառույթների իրականացման նպատակով յուրաքանչյուր տարածաշրջանից ընտրվեց մեկ ազգային համակարգող, որպես UNCCD-ի ներկայացուցիչներ Կենսաբազմազանության կոնվենցիայի (CBD) հետ փոխհարաբերություններում՝ բացահայտելու համագործակցության ամրապնդման հնարավորությունները կենսաբազմազանության հետ՝ կապված կոնվենցիաների և այլ բազմակողմ համաձայնագրերի շարքում, Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակի իրականացման գործում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ներկայացուցիչների կողմից առաջադրվեց իմ թեկնածությունը, ինչը դրական ընդունվեց և հաստատվեց քարտուղարության կողմից:

- CRIC21-ում պատվիրակները ծանոթացան 126 երկրների կողմից ազգային զեկույցներով ներկայացված համախառն տվյալներին՝ որպես հողերի դեգրադացիայի վերաբերյալ UNCCD տվյալների բազայի մաս: UNCCD-ի պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ առկա են հողերի կորստի և հողերի վերականգնման միտումները, ինչը հնարավորություն է տալիս փոխանակում կատարել ազգային և տարածաշրջանային փորձի վերաբերյալ՝ մեկնաբանելով Քարտուղարության կողմից տրամադրված գլոբալ տվյալները (default data) և հետագայում դրանք համադրել ազգային մակարդակում հավաքագրված տվյալներին: Պատվիրակները օգտվեցին այս փորձից՝ կարծիք հայտնելով կոնվենցիայի հինգ ռազմավարական նպատակներով առաջընթացի զեկույցների, ինչպես նաև երաշտի, Կայուն Զարգացման Նպատակների (SDG), գենդերային և հողատիրության քաղաքականության շրջանակների վերաբերյալ առաջընթացի զեկույցների վերաբերյալ:

- Վերանայվել է անկախ գնահատման որոշ հիմնական բացահայտումներն ու առաջարկությունները, որոնք իրականացվել են որպես UNCCD ռազմավարական շրջանակի (2018-2030) միջնաժամկետ գնահատման մաս, ինչը կօգնի ամրապնդել կոնվենցիայի իրականացմանը մինչև 2030 թվականը և դրանից հետո: Գնահատման վերաբերյալ դիտարկումներին զուգահեռ քննարկվեցին քաղաքական և ֆինանսական պարտավորությունները, ներառյալ կոնվենցիայի քաղաքական տեսանելիությունը բարձրացնելու անհրաժեշտությունը:

**6. Հանդիպումները, ելույթները.**

CRIC21-ը գումարվեց 2023 թվականի նոյեմբերի 13-17-ը Ուզբեկստանի Սամարղանդում քաղաքում: Գրանցված էին մոտ 1000 մասնակից, ինչը այն դարձնում է մինչ օրս ամենամեծ CRIC-ը ներկաների առումով: Բացի այդ, առաջին անգամ CRIC-ում անցկացվեցին կողմնակի միջոցառումներ(Side event)՝ ավելի քան 40 ծրագրված միջոցառումներով, որոնք մշակում էին Կոմիտեի կողմից քննարկված որոշ հարցեր:

Մասնակցել եմ Կողմնակի միջոցառումներին, որոնցից 3-ում սահիկաշարով ներկայացրել եմ Հայաստանում թեմային առնչվող առկա մարտահրավերները և իրականացվող ծրագրերը՝ «ՌԵՍԻԼԵՆԴ Հայաստանի դիմակայուն լանդշաֆտների ծրագիր» (WorldBank,SIDA), «Հայաստանում հողերի դեգրադացման կանխման հանձնառությունների/պարտականություններ ի իրականացումը՝ դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման և վերականգնման միջոցով» (FAO), «Բարելավված հողի մոնիտորինգի համակարգ՝ հողի ծածկույթի քարտեզի միջոցով և ինտեգրում Ազգային Գեոպորտալին» (GEO-LDN) (առդիր):

Երաշտի դեմ պայքարի արդյունավետ քաղաքականության և իրականացման միջոցառումների միջկառավարական աշխատանքային խումբը (IWG on Drougt) կոնվենցիայի համաձայնագրի շրջանակներում քննարկման ներկայացրեց իր առաջընթացի զեկույցը: Ստացված առաջարկությունները քննարկվեցին նոյեմբերի 18-20-ը կայացած IWG4 հանդպմանը: Առաջարկությունները կքննարկվեն կողմ երկրների և փորձագետների կողմից առաջիկա ամիսների ընդացքում: Զեկույցի նախնական տարբերակը կներկայացվի IWG5 հանդիպմանը, որը տեղի կունենա 2024 թվականին Չիլիում :

Լայն շրջանակով խորհրդակցություններ անցկացվեցին անկախ գնահատման եզրակացությունների և առաջարկությունների վերաբերյալ՝ բացահայտելու հնարավոր ապագա գործողությունները՝ հետագայում ընդլայնելու Կոնվենցիայի 2018-2030 ռազմավարական շրջանակի իրագործումը:

**7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

CRIC-ի շրջանակներում մանդատով սահմանված չեն որոշումներ ընդունել կամ փաստաթղթեր ստորագրել, քննարկումների արդյունքները կներկայցվեն COP-16-ին:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

CRIC21-ին ներկայցրեցի Հայաստանում «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի ազգային զեկույցի իրականացման խնդիրները, մատնանշելով ազգային տվյալների բացակայությունը, առկա գլոբալ տվյալների

արժանահավատության խնդիրը, զեկույց իրականացնող մարմնի և քաղաքականություն մշակող լիազոր մարմնի թերի համագործակցությունը:

Հաշվի առնելով UNCCD PRAIS4 պորտալում քարտեզագրական նյութերի վերլուծության գործիքի ներդրման հնարավորությունը, առաջարկեցի քննարկել ազգային մակարդակում կարողությունների զարգացման հնարավորությունները, ինչը թույլ կտա կիրառել արդեն իսկ ներդրված առաջադեմ տեխնոլոգիական լուծումները զեկույցում տեղ գտած տվյալների արժանահավատության բարձրացման հարցում: Գաղափարը աջակցություն ստացավ մի շարք երկրների կողմից և որպես առաջնահերթություն տեղ գտավ CRIC21-ի հաշվետվության մեջ: Ընտրվեցին նմանատիպ խնդրով հետաքրքրված մոտ 20 երկրներ, այդ թվում Հայաստանը, որոնց ազգային համակարգողները առաջիկայում հնարավորություն կստանան վերապատրաստվել «Հողերի դեգրադացիայի դինամիկայի և վերականգնման ջանքերի գնահատում՝ հեռակառավարման տվյալների և GIS գործիքների միջոցով» աշխատաժողովի շրջանակներում:

Գործուղվող՝ Նարինե Հակոբյան

24.11.2023թ